

10. ԸԽՇԱՐՔՈՒՄԸՍ ԱՄՄԸԵՆ ՀԻՆՉ ՈՒՐԱՆ ՏԸԵՂԱՎՆ Ա ՔՑԻՆԱՄ

Մին թաքավորու կնոջ էրկան վախտ խոխա չար պիրում։ Մին օր էտ թաքավորն ուրան կնոջանը ետ կալած ա՝ ուս ա կյամ շոռ կյանլ։ Քյինանլով, քյինանլով հըսնում ըն մին ժամկում մին լավ տըեղ։ Թաքավորեն կնոջն ասում ա.—Շահ, հինչ լավ տըեղ ա յե՞։ Թաքավորն էլ ասում ա.—Ա՛կնոջ, գե վըեր էտքան լավ տըեղ ա, հանլրանք ասուած մըեր խոսկը մեհետ կըսկանա, մըեզ մին խոխա տա, էս քու ասած լավ տըեղը մին մըեծ պալատ ըմ շինանկան, մաչին տինիմ, վըեր ըստըեղ մըծանա։

Ժուկ ա անց կենում, ժըմանակ ա անց կենում, ասուած տահանց խոսկն ըսկանում ա, թաքավորեն կնոջը պատճառուր ա տըեռնում, մին ախճիգ պիրում։

Թաքավորը պիրում ա տըեղ մին պալատ շինում, ըխճըկանն էտ պըլատումը մըծըցնում, համ էլ հունց պահում ա, վըեր էտ ախճիգը «մարթ»[1] բառը ըսկանա վըեչ, գյիդա վըեչ, թա հինչ պեն ա։ Թաքավորեն էտ պըլատեն նազիր-վեզիրը, ծառայողնեն

[1] Տղամարդ (Մ. Բ.)։

լոխ կնանեքյ ա տինում, թողում չի, վրեր տրեղ տրղրմարթու շոք ըրվա, ինքն էլ տրղերքատ մուտանում չի։

Էտ ախճիգը վրեր մրժանում ա, հենց էտ պըլատումն էլ ուտում ըն տամ, վարժարեղնեն էլ լոխ կնանեքյ ըն ինում։ Վրեր մին քանի տարե անց ա կենում տա լափ մրժանում ա, լավ, քու հավան կացած շատ ղաշանեքյ ախճիգյ ա տրեռնում։

Մին օր մին շալոն զորք կյամ ա էտ թաքավրերեն պըլատեն քըշտավն անց կենում, քյինում։ Էտ զորքըեն կամանդիրը վրեր թաքավրերեն պըլատրեն բալկոնեն նշում ա, էտ ըխճըկանը տրեսանում ա, բուրդան ըռանգյը փոխում ա, խրեգյ ա մնում, վրեր օշը տանեն։ Ուրան սըլդըթներան մինն էտ պենը տրեսնում ա։ Վրեր տրեղ ըն հըսնում, տա կամանդիրին ասում ա տու ինձ էսքան դոլլար փող տո, ես քյինում ախճիգը քըզեռն պիրիմ։ Կամանդիրը փողը տամ ա, տա քյինում ա տրեղեռ բըզարումը մի լավ ուտա քթենում, տրան ասում.—Հիշքան փող օգրես, ես ըրկուտակ, իրքատակ կըտամ, ինձեռն տասներկու ըշկանե մին լավ բուփեռ շինի, տասնըմին աշկը պեց թող, նըերքե աշկրեն մին պինալին թող քու ծրեռքեռ կենա, մինն իմ ծրեռքես, ես նի յըմ մենական էտ նըերքե աշկը, կրքըլես, պինալին յոր օնրես, էնքան կըպահես, վրեր թաքավրերը կրկյա էտ բուփեռն ուրան ըխճըկանը հետն ինքյ օնրե տանե, իմ գաղտնիքը մին տու կրգիդաս, մին էլ ես։ Ուտան իսի յել անում ա։

Մին օր թաքավրերն ուրան կնգանը նհրեռ կյամ ա բազարը, տրեսնում մին լավ բուփեռ ըն ծախում։ Կնգանն ասում ա.—Հինչ լավ բուփեռ ա, մրեր ըխճըկանը հետն ինքյ օնրենքյ, կյիրքերը-պենը տինի մաչին։ Կնեգյը թա՝ ինքյ օնրենքյ։ Ինքյ ըն օնում, վրեր տանեն պալատը, աշկրերը լոխ պենալ ըն տամ փորցում, նըերքե աշկը պենվում չի։ Վրեր հըրցնում ըն; թա խե՞ պենվում չի, ուտան ասում ա.—Ցափուշխանը պրենդ ա, վրեր տանեքյ պալատը, մին քանի օր կենա տրեղը թրքանա, պինվրլական ա։

Բուփեռը յոր ըն օնում, տանում թաքավրերեն ըխճըկանը պալատը։ Մին քանի օրան հետ էտ ախճիգն ուրան կյիրքը կըրթիլիս մին քանի իրես վրեր անց ա կենում, կյամ ա լափ վերչին իրեսումը էրկու տրեղ ամարթ բառը պրտահում։ Կարթում ա, հոնան ասում.—Մա՞րթ, մա՞րթ, ա՞խ, էս բառը կլոխ չըմ ինգյում։ Էտ խոսկեն յիրա բուրդան էտ տղան բուփեռին նըերքե աշկան պինալին քցում ա, շուռ տամ աշկը պենում, տոնա կյամ ըխճըկանն առաչը, ասում.—Մարթը էտ հենց ես ըմ։ Էտ ախճիգն ասում ա.—Կլոխ չըմ ինգյում։ Տղան ըսկսում ա բացատրելը, վրեր ըստրեղավ զորք անց կրնալիս ուրանց կամանդերն ուրան վրեր տրեսնում ա, ու-

րան կուրցնում ա, հիվընդանում։ Ետևան լոխ նազլ ա անում, թա հունց ա բուփետը շինիլ տուվալ, նըերքն աշկը կապել տուվալ, վերչումն էլ ասում ա, վըեր ինքյը եկալ ա ուրան տանն ուրանց կամանդերին հետն, մինգյել թա՝ վըեր կամանդերին հետն չըմ տըննական, էն ա ես յոր կանեմ իլի։ Վերչը էտ տղան ուրան պենը տըեսնում ա, էլլա նի մենում բուփետին նըերքն աշկը, մաչավը քըլում, ընդրեղ կենում։ Իսի ամմըեն օր էտ տղան տուն ա կյամ էտ ըխեբկանը նՀըետ խոսում, էլլա նի մենում ուրան տըեղը։

Մին օր ըխեբկանը մարը կյամ ա պալատը, տըեսնում ախեիգյը թըշընակատ։ Քյինանմ ա թաքավըերեն ասում, թաքավըերը տրան թա՝ հինչ ը՞ս տիրտըկ-մերտակ տուն տամ։ Մին քանի օրն էլ վըեր անց ա կենում, մարը նորից ա քյինանմ ըխեբկանը կոշտը, տըեսնում ա ախեիգյը պատճառուր։ Էլլա յա կյամ թաքավըերեն ասում, թաքավըերը հըվատում չի։

Մին օր էլ մարը քյինանմ ա, տըեսնում ախեիգյը խոխա պերած, կյամ ա մարթին ասում, մարթն էս գոնանմ եր ա կենում, քյինանմ ըխեբկանը պալատը, տըեսնում կնգանն ասածը գունդ ա։ Ըխեբկանը յիրա կըզնըվում ա, թա էս հի՞նչ պեն ա, ախեիգյն ասում ա.—Ես քեզ ճինանչում չըմ, տու հու վը՞ս, վըեր ինձերա կըզնըվում ըս։ Թաքավըերը թա՝ ես քու հաՀր ըմ, ես նրգյիրին տարը, տու հինչ իրա՞վունք ունես, վըեր ինձ իսի ջողոք ըս տամ։ Ախեիգյն էլ ասում ա.—Թա իմ հաՀր ըս, խե՞ էսքան տարի մեհետ տուն չըս եկալ իրեսըս, վըեր քեզ ճինանչիմ, իսկ բուփետը բըզարան վըեր ինքյ ըս կալալ պերալ, խե՞ նըերքն աշկը պեց չըս ըրալ։ Համ ասում ա, համ բուփետին նըերքն աշկըեն տուռը թակում, տղան պինանչին քցում ա, պենում, տուն կյամ։

Ամբեղ թաքավըերն ամմըեն հինչ կլոխ ա ինգյում, հարը կորած, պիրում ա օխտը օր, օխտը քշեր հըրատանեքյ անում, տահանց փտակում, թողում պըլատումը, ինքյն անց կենում քյինանմ։